սահմանված ժամկետում նախատեսված աշխատանքը չկատարելու հետևանքով առաջացած պատասխանատվությունից:

Այսպիսով, Դատարանը, հիմք ընդունելով կատարված եզրահանգումները՝ գտնում է, որ հայցվորի պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման:

Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի բնության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցը մերժվում է, իսկ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

«ՍՆԱՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու և գումարի լրիվ գանձման պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ